# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ

## 3.— ՍԵԴՐԱԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ

*Բնութեան եւ* intime *պէյզաժի նկարիչն է Սեդրակ Առաքելեանը, որ միւս նկարիչների նման անցել է որոշ էտապներից։*

*Առաջին շրջանը, որ ընդգրկում է 1908—1917 թ., կազմում է Մոսկուայի բարձրագոյն նկարչական դպրոցը,— Կոստանդին Կորովին, Արխիպով եւ Սեր. Իվանով, որոնք ուէալ կերպով մօտենում էին բնութեան։ Առաքելեանն ընթանում է իր ուսուցիչների ուղիով։*

*1923 թ. բեկում է առաջանում նրա հոգեկան աշխարհում, ընկնում է որոնումների մի նոր շրջան։ Հայաստանի նոր գոյների եւ ձեւերի ազդեցութեան տակ նա գալիս է այն խոր համոզման, որ նկարչի ամենամեծ ուսուցիչը եւ ամենամեծ ճշմարտախօսը բնութիւնն է։ Այդ համակցողութեամբ էլ նա իր նիւթը, տէխնիկան փնտռում է բնութեան մէջ, որից վերցնում է այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է ամբողջական մի իդէալ արտայայտելու համար։ Բնութեան մէջ էլ նա փնտռում է իր ուժը։*



Նկար՝ ՍԵԴՐԱԿ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

ՍԵՒԱՆԱՅ ԿՂԶԻՒ ԱՓԸ ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐՈՎ

(Կը գտնուի Երեւանի Պետական Կեդր. Թանգարանին մէջ)

*Այսօր էլ Առաքելեանն ապրում է որոնումների շրջան. աշխատում է նա հին շկօլայի (ռուսական) կոլորիտից ազատուել եւ Արեւելքին ձուլուել։*

*Նրա գործերից յիշենք. «Ցորեն են ծեծում», «Զորագեղ», «Նախիջեւանի օձի քար», «Աստղալի գիշեր Երեւանում», «Սեւանայ լիճը», «Գիշերը Սեւանում», եւլն.։*

Թիֆլիս

*ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ*

digitised by A.R.A.R.@